ՀՀ Անկախության հռչակման 22-րդ տարեդարձին նվիրված տոնական համերգին մասնակցել են ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալներ Ս. Թարվերդյանը և Մ. Հարությունյանը

Սեպտեմբերի 21-ին Եղեգնաձորի քաղաքային ամֆիթատրոնում տեղի ունեցավ տոնական համերգ, նվիրված Հայաստանի Հանրապետության Անկախության հռչակման 22-րդ տարեդարձին: Համերգին ներկա էին ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալներ Սամվել Թարվերդյանը և Մելս Հարությունյանը: Համերգային ծրագրին մասնակցում էին Եղեգնաձորի մարզային մշակույթի կենտրոնում գործող գեղարվեստական խմբերի և Վայքի ՄՍԿ-ի պարային համույթի սաները: Համերգն ամփոփեց Վայոց ձորի թեմի առաջնորդարանի ,,Կրակների շող,, պարային խումբը:

Միջոցառումն ավարտվեց տոնական հրավառությամբ: